ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հունիսի 10-ից 14-ը Շվեդիայի Թագավորություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը**
   Վահան Պոտոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Շվեդիայի Թագավորություն (ք. Եվլե), 2024թ. հունիսի 10-ից 14-ը:

4. **Հրավիրող կողմը**
   Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   Մասնակցել «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի շրջանակներում կազմակերպվող ուսուցողական այցին:

6. **Քննարկված թեմաները**
   Ուսուցողական այցի ընթացքում հայաստանյան պատվիրակությունը հյուրընկալվել էր «Gastrike Atervinnare» կազմակերպության կողմից, որը հանդիսանում է թափոնների տեսակավորված հավաքման, պահման և փոխադրման տարածաշրջանային օպերատոր: Այցի ընթացքում քննարկվել են բնակավայրերում աղբահանության աշխատանքների կազմակերպման փորձը, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքերից և առանձնատնային թաղամասերից աղբի տեսակավորված հավաքման առանձնահատկությունները, կազմակերպությանը պատկանող վերամշակման կենտրոնների աշխատանքները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Ուսուցողական այցի ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել «Gastrike Atervinnare» կազմակերպության միջազգային հարաբերությունների, սպառողների հետ հաղորդակցության, տեխնիկական սպասարկման, վտանգավոր թափոնների կառավարման, թվայնացման ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ծանոթացել յուրաքանչյուր ստորաբաժանման խնդիրներին և աշխատանքներին: Բացի այդ, կազմակերպվել են այցելություններ դեպի կենսագազի ստացման «Ekogas» համալիր, մետաղի ջարդոնի վերամշակման «Kuusakoski» կենտրոն, ինչպես նաև «Pre-Zero» ընկերության կողմից շահագործվող սանիտարական աղբավայր:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր**

Ուսուցողական այցի ընթացքում հյուրընկալող կազմակերպության հետ ստեղծվել են կապեր, ձեռք է բերվել պայմանավորվածություն թափոնների կառավարման, մասնավորապես՝ սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորման և հանրային իրազկեման հարցերի շուրջ հեռանկարային համագործակցության վերաբերյալ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքներ**

Առաջարկվել է 8-րդ կետում նշված պայմանավորվածությունն իրագործելու համար հետևողական աշխատանքներ տանել:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

19.06.2024թ.